

Զերդ Ամենապատուութիւն Եղիշէ Պատրիարք Երուսաղէմի
Պատրիարքարան Հայոց
Հին Քաղաք, Երուսաղէմ, Խորայէլ

Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»

Ս. Յարութեան մեծ եւ կենսուրախ աւետիսով կ'ողջունենք Զերդ Ամենապատու-
ութիւնը եւ Զեր առաջնորդութեան վստահուած աստուածամէր հօտը:

Թող Յարուցեալ Փրկիչը Իր ամէնառատ շնորհն ու հովանին անպակաս ընէ Զեզ
եւ Զեր ուխտակից եւ ուխտանուէր Միաբան Հայրերու վրայէն, եւ խաղաղութեան ու
բարօրութեան մէջ պահէ Քրիստոսսակոխ Սուրբ Երկիրն ու համագոյրը ամբողջ:

Ընորհաւորելով Զերդ Ամենապատուութիւնը Զատկական համբոյրով, կը մնամ
անխախտ սիրով ի Յարուցեալն Քրիստոս՝

Պ Ի Մ Է Ն

Պատրիարք Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ

Ս. Զատիկ, 1980, Մոսկուա

Հ Ա Յ Ի Ա Կ Ա Ն Բ Ա Ր Ե Գ Ա Բ Շ Ա Կ Ա Ն Բ Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ի Ր Մ Ի Ո Ւ Թ Ի Ւ Ն

Մարտ 17, 1980

Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէլուան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ

Ամենապատիւ Մըրազան Հայր,

Սուրբ Զատկուան մօտալուտ տօնին առիթով համայն Քրիստոնեայ մարդկու-
թիւնը իր հայեացքը կ'ուղղէ դէպի Սուրբ Երկիր, ուրկէ յարութիւն առաւ Աստուածոր-
դին եւ ուր մեր ժողովուրդը դարերով իր հաւատքը խնկեց աստուածակոխ վայրերու
շուրջ:

Ներկայիս Ամենապատիւ Մըրազնութեանդ վիճակուած է խորհրդանիշը դառնալ
մեր պապերու սուրբ հաւատքին եւ աւանդապահը հանդիսանալ Սուրբ Տեղեաց մէջ
գտնուող մեր աղօթատեղիներուն ու հաստատութեանց:

Զեզի եւ Զեր նուիրեալ Միաբանութեան կը մաղթենք ոյժ եւ կորով Զեր աստուա-
ծահանոյ առաքելութեան համար:

Սուրբ Յարութեան տօնին առիթով կը շնորհաւորենք Զեզ եւ Երուսաղէմի ամ-
բողջ Միաբանութիւնը եւ կը մնանք,

Խորին յարգանօք՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ